

սխալ կարգադրութիւնների պառակն է:

Հայ ժողովրդի ազգային կետանքը արտասահմանում, մասնաւորապէս մշակութային գործը, խոշոր չափով կապւած է եկեղեցու, քեմական կազմակերպութեան հետ: Հետեւաբար, արտասահմանի հայութեան կետանքի անդրորութեան եւ մշակութային գարգացման ապահովութեան տևակետից կարելի չէ քննականն համարել այն դերը, որ էջմիածինը յամառում է խաղալ գաղութահայոց կեանում: Եւ ժամի որ քննութեան առարկայ է «Հայոց Եկեղեցու Սահմանադրութեան» նախագիծը Գունև «Վէմ», 1934 թ. № 5, էջ 121), անհրաժեշտ է գտնել իրաւական փոխյարաբերութեան մի այնպիսի ձեւ, որ՝ պահելով հանդերձ Ամենայն Հայոց Կարողիկոսութեան ընդհանրական դիրքը եւ գերազոյն իրաւունքը եկեղեցու դաւանական – ծխական հարցերում՝ լիապէս ապահովէ քեմերի ազգային – վարչական, ժաղաքացիական ու մշակութային ինքնավարութիւնը:

Էջմիածնի մինչեւ այժմ ունեցած ընթացքից եւ շարժումներից չի երեւում, քէ նա ունի խնդրի կարեւորութեան գի-

տակցութիւնը եւ որոշ ծրագիր արտասահմանի հայութեան համար: Նա աւելի զրադւած է իր ներքին ապահովութեան մտահոգութիւններով – «Էջմիածնի լուծայ», տաճարի վերանորոգում եւայլն: Նա այնքան ամտեղեակ է գաղութահայերի նիւթական հնարաւորութիւններին, որ նոյն իսկ մոսածում է գաղութահայութեան դրամներով եկեղեցաքարչարագիր շինել երեւանի եւ էջմիածնի միջեւ: Եւ միւս կողմից, չի երեւում, քէ նրան մտահոգում է արտասահմանի 700,000 տարագիր եւ անտէր հայութեան վիճակը: Ընդհակառակը, նա կարծես հաւասարմօրէն ընդօրինակել է բոլշևիկների որդեգրած ժաղաքականութիւնը – առնել ինչ որ կարելի է գաղութահայերի գրանից եւ փոխարէնը որքան ինար է ֆիչ բան տալ:

Գաղութահայութիւնը, յամենայն դէպը, իր մասին այդպէս չի կարող մըտածել եւ պարտաւոր է լրջօրէն խորհել տիրող իրանդագին վիճակը դարմանելու, իր գոյութիւնն ու զարգացումը աւելի ամուր եւ վստահելի հիմքերի վրա դնելու մասին:

## ՇԱՐԺԱՆԿԱՐԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային շարժանկարի 15-րդ տարեկանի կապակցութեամբ Հայաստանում մարտի վերջերին տօնել է նաև Հայկինոյի 12-ամեակը: Այս առքին աւելորդ չենք համարում մի երկու խօսքով ներկայացնել շարժանկարի անցած ուղին: Հայաստանում եւ նրա ապագայ հեռանկարները:

Հայկինոյ սկսեց գործել քերահաւատութեամ մքնուրոտի մէջ: Կային սկզբնական շրջանում մի շարք պատասխանուու մարդիկ, որոնք աւելորդ էին գտնում սինեմայի, որպէս ինքնուրոյն ձեռնարկութեան, գոյութիւնը Հայաստանում: Նրանց կարծիքով պէտք է շար-

ժանկարի գործը կենտրոնանար Թիֆլիզում ու կազմակերպւէր անդրկովկանան չափանիշով: Ազգային համբաւակետութիւնների եւ մասնաւորապէս Հայաստանի մէջ տիրող պայմանները – ասում էին նրանք, – նպաստաւոր չեն ֆիչ քէ շատ կանոնաւոր ժապահն արտադրելուու համար: Մեծ ժաղակներ, զամգրածածին տեսարաններ, շին շիններ եւ յարկարածիններ նկարելու համար, Հայկինոյ ստիպւած է իր ամբողջ բարդ մէթեւան փոխադրել Թիֆլիզ, Բագուե շատ յանալ նոյն իսկ Մոսկուա եւ այնուղի համել պէտք եղած տեսարանները: Այդ ամենը աւելորդ ծախքերի

հետ է կապւած, որոնցից կարելի է խուսափել, եթե միացւի կինոյի գործը Թիֆլիզում ու հայերին հնարաւորութիւն տրվի օգտւելու այդ կենտրոնական ապարատից:

Ինչպէս գիտեմ, այս տևասկիտը չանցաւ, եւ այդ մեծ մասսմբ Վրաստաճի պատճառով, որ ցանկացաւ ունենալ իր ազգային ուրոյն շարժանկարային ձեռնարկութիւնը: Դրանից յետոյ նաև Հայաստանում փակւեց վերոյիշեալ վեճը, եւ Հայկինօն շարունակեց գործել որպէս խորհրդահայ մի առանձին հիմնարկութիւն:

Պէտք է մատնանշել, որ այդ գործունեութիւնը 12 տարւայ ընթացքում եղել է շատ համեստ եւ նոյն իսկ անբաւարաբ: Եւ այդ ոչ միայն քանակի, այլ եւ որակի կողմից: Այդ բանը շեշտւած է յորելեանի առքի խորհրդային մամուլում գրւած բոլոր յօդածների մէջ:

Շարժանկարը, լինելով մշակոյքի մի մասը, անցել է իր զարգացման ընթացքում նոյն փուլերով, ինչ որ բարունքը, զարկանութիւնը, երածշուութիւնը, նկարչութիւնը եւ գիտութիւնը: Հայկինոյի վարիչ Գ. Դժոնենին երեք շրջանի է բաժանում կիսու-արդինարերութեան 12-ամեայ ուղին: Առաջին շրջանը, որ քննդրիում է 1924—929 թականները, համարում է շարժանկարի համեմատական ծաղկումի շրջան: Տնտեսական նոր քաղաքականութիւնը (նէտ), որ մի նահանջ էր ուղարկան կոմունիզմի նըկատմամբ եւ որ տարածւեց խորհրդային կենաքի բոլոր բնագաւառների վրա, ստեղծեց համեմատական ազառութիւն արևստի բոլոր նիւյերի համար եւ գրականութեան, բարունի, գիտութեան եւայլինի հետ միասին «Ճաղկեց» նաև շարժանկարը: Սակայն Հայաստանում, այն մասնաւաք պատճառներով, որոնց մասին խօս կը լինի քիչ յետոյ, կինոյի գործը նաև այս շրջանում եղաւ շատ համեստ: Արտա-

դբրւած ժապաւէններից («Նամուս», «Զարէ», «Շոր և Շորշոր», «Զար Ո-գին», «Խազբուշ», «Ցուեր իրաքուլի վրա», «10-րդը», «Զամալլու», եւ այլն) գեղարեսատական նւազագոյն պահանջները լրացնում եւ որոշ արժեք են ներկայացնում միայն «Նամուսը» եւ մասսմբ նաև «Զար Ո-գին»: Մնացածները, ինչպէս վկայում է Ա. Խանչեանը, «աչքի են ընկնում իրենց սխեմատիզմով ու տաղտկալիութեամբ»:

Երկրորդ շրջանում (1929—1932) գըրութիւնն էլ աւելի վատանառում է: Այս շրջանը զուգադիպում է նէպ'—ի հաշւեյարդարին եւ հնգամետակի ժաղաքականութեան, երբ դիկտատուրայի երկարէ օպակները սեզմում են ծայր աստիճան եւ սպանում մշակոյքի միւս նիւյերի հետ միասին նաև շարժանկարը: Թէ որքան զարհութելի են եղել այդ կաշկանդումները, կարելի է դատել նրանից, որ անզամ իրենք՝ բոլշևիկները հենարաւոր են համարում այժմ իրավարակով խոսովանել այդ: Երկրորդ շրջանում, — գրում է Գ. Դըգնութիւն (Խ. Հ. քի 64), — «ռազմական տեղեններները (այժմ դատապարտած ժաղաքականութիւն, որ կիրառում էր այդ շրջանում գրականութեան նկատմամբ Ա. Խ.) մուտք գործելով նաև կիմետասողրափիայի բնագաւառը, դուրս են մղում զեղարեսատական ֆիլմերը եւ ծաւալում ազիտարոպականութիւնը (քարոզութիւնը), երբ գործարանները արտադրում են հարիւրաւոր ազիտարոպափիլմեր, որոնց մեծ մասը մնում է զարակներում եւ երեք չի ցուցադրում»: Այդ շրջանում Հայկինօն արտադրում է 26 քարոզչական ու բացարձակակիս անարժեք ժապաւէններ եւ մի քանի հաս չափազանց միջակ որակի նկարներ, որոնց բուռմ «Սեւ քեւի տակ», «Հաշիմ», «Կիլոս», «Կիմը իերբապահ», «Առաջին նառագայթներ», «Միշտ պատրաստ», «Երկիր նայիրի», «Մեքսիկական դիպլո-

մատներ», «Զամալու», «Գողը», «Քրդիր եզրիմեներ», «Մի դէպֆ Սէն Լուի քաղաքում», «Անուշ», «Երկու գիշեր», եւայլն: Յիշեալ ժապաւէններից միայն Կիմօ-քրոնիկի բնոյր կրող նկարները քիչ թէ շատ տամելի են, իսկ մնացածները գործի են գեղարւեստական որեւէ արձեքից: Արանից շատերը խստօրէն քննադաւում են նոյն իսկ Ա-իանչեանի կողմից, թէեւ նրա քարտուղարութեան օրով են արտադրել այդ ժապաւէնները: «Անուշ»-ը, - ասում է իսանցեամբ իր ճառերից մէկում, - ոչ միայն կոպիս կերպով աղաւաղում է Թումանեանի այդ գեղեցիկ գործը, այլ եւ իր վրա է կրում փորմալիզմի (ձեւապաշտութեան) ցայտում կնիքը: Անյաջող են մասնաւորապէս «Եղափոխական անցեալին» նւիրած «Զամալու»-ն, «Հաշիմ»-ը (տաճիկ գիմւոր, որ «Խոշտանգման է ենթարկում դաշնակցական բանտուում») եւ «Երկու գիշեր»-ը (մայիսեան ապաւամբութեան շրջանից):

Գալով վերջին (երրորդ) շրջանին, պէտք է ասել, որ նա դեռ «Փ լինելոց» է: Առ այժմ ուշագրաւ երկու ժապաւէնն կայ այս շրջանին վերաբերող, որ բնցից «Գիգոր»-ը աւարտած է, իսկ «Պէտո»-ն դեռ պատրաստում է:

Այս շրջանը հանդիսանում է Հայկինոյի տեխնիքական վերակառուցման շրջան, որովհետեւ նա անցնում է ենչուն ժապաւէնների արտադրութեան եւ փորձեր է անում ձերքագուտել նախորդ շրջանի կաշկանդումներից ու ուշագրութիւն դարձնել փիլմերի որակի եւ գեղարւեստականութեան վրա: 1935 թւրի համար հաստատած պլանը իր վրա կրում է որոշ չափով այս նոր հակումների կնիքը:

Ընթացիկ տարւայ մէջ Հայաստանում նկարահանելու և նետեւեալ Փիլմերը - «Տրագեդիա Ալագեազի վրա» (հրնչում), «Քաջ Նազար» (հնչում), «Շահնամե» (հնչում), «Հայաստանի խոր-

կըրդայնացման 15-ամեակը» (ազիստպըրապ. եւ հնչում), «Փախուստ» (համբը), «Ամյաղրելի գումակառներ» (համբ), եւ մի քանի կիմօ-քրոնիկներ:

Հակառակ մի քանի բարերար նշանների ու լաւատեսակ յայտարարութիւնների, առանձին սպասելիքներ՝ չպէտք է ունենալ Հայկինոյի նաեւ այս տարւայ ու հետագայ գործունեութիւնից: Կամ պատմառներ, որոնք ստիպում են մեզ մեծ յոյսեր չկապել շարժանկարի զարգացման հեռանկարների հետ:

Որպէս են այդ պատմառները:

Դրանից գլխաւորը կամունխաստական իւրայատուկ զմբուռումն է արևստի, գրականութեան, քատրոնի եւ առհասարակ մշակութային բոլոր նիւթերի մասին: Լենինի, Ստալինի եւ նրանց բոլոր հետեւզների համար արևստն ու գրականութիւնն եւ նամանաւանդ շարժանկարը միայն միջոցներ են «սոցիալիզմի կառուցման» համբար: Կոմ. կուսակցութեան 13-րդ համագումարում Ստալինը, ընդգծելով կինոյի նշանակութիւնը, յայտարարում է, որ «կիմնն հանդիսանում է զամգւածային ազիստացիայի (քարոզչութեան) մեծագոյն միջոցը», աւելացնելով, որ «Խնմիքն այդ գործը մեր ձեռքն առնելն է»: Շարժանեկարային շինարարութեան ասպարեզում կումունիստների 15-ամեայ գործունեութիւնը ցոյց տուեց, որ նրանք այդ գործը առան իրենց ձեռքը եւ ջանացին ծառայեցնել այն նպատակին, որ դրեւ էին իրենց առաջ: Այդ մասնակի նպատակը (սոցիալիզմի կառուցման) մեծապէս սահմանափակում էր շարժանեկարային գործի շրջանակները խորհրդային երկրներում եւ միանգամայն ուրոյն բնոյր: Եր տալիս նրան: Շնորհիւ խորհրդահայ կեանելի մի քանի մասնայատուկ պայմանների, շարժանեկարային գործի այդ առանձնայատկութիւնները Հայաստանում արտայայտվեցին առանձնապէս շեշտած ձեւով:

Շարժանեկար, դարձնելով միայն մի-

ջոց կուսակցական գործի ազիտացիայի համար, բոլշեվիկները, բնականարար, պէտք է արտադրէին միայն այնպիսի ժապաւէններ, որոնք «յագեցւած են կումունիստական անաղարտ գաղափարախօսութեամբ»։ Դրանից հետեւում է, որ բոլոր այն ժապաւէնները, որոնք միայն զուտ գեղարւեստական նշանակութիւն ունեն եւ կամ շօշափում են քննամի դասակարգի համար հետաքրքրութիւն ներկայացնող խնդիրներ (սիրոյ, ամուսնութեան եւայլն պրոբլեմներ), պէտք է մէկ կողմ նետուին։ Այս սկզբունքը, երկ հաշվի չառնենք առաջին հնգամեսակի շրջանը, երբեք տառացիօրէն եւ հետեւողական կերպով չգործադրութեց Ռուսաստանում։ Ազիտապրապ (ազիտացիայի եւ պրոպագանդայի) նըշանակութիւն ունեցող ժապաւէնների կարգին, այնուհետ միշտ էլ արտադրւեցան զուտ գեղարւեստական տարրեր պարունակող (լինցցաղ, բնուրեան գեղեցկութիւն, պատմական անցեալ եւայլըն) նկարներ, որոնք կրելով իրենց վրա աշխարհահռչակ բնադիրների (Եղիշչատէյն, Գուդովլին) տաղանդի դրսութիւնը, դարձան շատ մօտ այն սովորական ֆիլմերին, որ արտադրուում են կարմիր գծից դուրս։ Միւս կողմից այն բոլոր ժապաւէնները, որոնք համաճայն բոլշեվիկնեան առաջադրանքների, պանկերում էին բոլշեվիկնեան պայքարի հերոսական շրջանը (բաղաբացիական պատերազմ սպասակի բանակների դէմ), ունեին իրենց մէջ որոշ քիւ գեղարւեստական գործեր, եւ այդ շնորհիւ այն հանգամանքի, որ դրանց նիւրը առնեած էր անցեալի իրական կեանքից, որ իրօ լիցուն է եղել հերոսական դրւագներով ու հերոսական դէմներով։

Հայաստանում, դժբախտաբար, բացառութիւններ համարեա չեղան եւ շարժանկարը զարգացաւ -այն ուղղափառ հանապարհով, որ գծել էր մարդունիմիզմը։ Եւ այդ այն պատճառով, որ մէկ կողմից մենք չունեցանք մեծա-

տաղանդ բեմադրիչներ ու դերասաններ եւ միւս կողմից խորհրդահայ կեանքը եկն սկզբից Ռուսաստանից տարրեր բոլանդակութեամբ զարգացաւ։ Խորհրդային շարժանկարին սնունդ մատակարարող բաղաբացիական կումունները Հայաստանում չկրիմնեցան եւ, Ռուսաստանը ընդօրինակելու իր նիգերի մէջ, Հայկինոն միշտ էլ կանգնած մընաց անլուծելի խնդրի առաջ։ Նա տառապեց նիւրի պակասից, որովհետեւ այն նիւրը, որ բխում էր հայ իրական կեանքից (անցեալ եւ ներկայ) եւ կարող էր գեղարւեստական ներշնչման ազրիւր ծառայել, արգիւած պտուղ էր խորհրդահայ շարժանկարի համար, իսկ այն, որ պարտադրուում էր կուսակցութեամ կողմից, չէր կարող գեղարւեստական ժապաւէնի նիւր ծառայել, որովհետեւ իրական կեանքը չէր ներկայացնում։

Հայկինոյի զիկավարների եւ խորհրդային գրագիտների հետ ունեցած տեսակցութեան ժամանակ Ա. Խանչեանը մասնանշում է, որ «մեր յեղափոխական անցեալը մինչեւ այժմ շատ աղօն են արտացոլւել Հայկինոյի արտադրանքներուում», աւելացնելով միաժամանակ, որ շարժանկարի ժապաւէններից ամենաբռյութը էկն այդ յեղափ. անցեալին նւիրուածներն են։ Ինչո՞ւ Պատմառը պարզ է։

Հայ ամբողջ պատմութիւնը, իր հերոսութիւններով հարուստ գրւագներով, դարձել է արգիւած նիւր Հայկինոյի համար։ Հին, միշտ եւ նոր պատմութեան նիւրած եւ ոչ մէկ ժապաւէն կայ Հայկինոյի արտադրանքների մէջ։ Շարժանկարային մի հսկայ բնագաւառ, որ այնքան նիւր է հայրայրել նւրազական եւ ամերիկեան սինեմային գոյութիւն չունի Հայկինոյի համար։ Այդ նիւրը չի օգտագործւում նոյմիսկ այն չափով, ինչ չափով օգտագործւում է Ռուսաստանում։ Այնտեղ կան բագմարիւ ժապաւէններ, ո-

բոնց նիւքը առնեած է ոչ միայն ռուսական առաջին յեղափոխութիւնից (1905-1906), այլ նաև դրանից շատ աւելի հին շրջանից (Պետրոս Մեծ եւայլն): Հայաստանում պատմութիւնը սկսում է միմիայն խորիրայնացման քականից, իսկ յեղափոխութիւնը՝ բոլշևիկների 1920 թ. մայիսեան շարժումներից: Հայոց պատմութեան հերոսական դրագմերը ֆիլմի վերածելը արգելած է, որովհետեւ նա որեւէ ձեռով չէ կարող նպաստել այն գործին (սոցիալիզմի կառուցման), որով զրադաւած են նայ բոլշևիկները: Աւելին՝ անցեալի այդ պահճացումը միայն օուր կը լեցնէ «գաշնակների» շրադացին, յարուցմանով ազգայնական ըզգացմունքներ տիրապեսների մէջ: Ինչ վերաբերում է ազգագրական շարժումներին եւ ցարիզմի դէմ մղած պայմաններին, Հայաստանում նաև այդ նիւքը արգելած է, որովհետեւ դրանց մէջ որեւէ մասնակցութիւն չեն ունեցու հայ բոլշևիկները:

Երեւակայեցի՛, ի՞նչ ոգեւորիչ ժապաւեններ կստացւին, երէ ֆիլմի վերածեկին մեր պատմութեան այնպիսի դրագմեր, ինչպէս, օրինակ, արարական շրջանի, կիլիկիայի, Ղարաբաղի մելիքների եւ տակի հին ժամանակների պայքարները օսուր տիրապետութեանց դէմ: Իսկ ազգագրական շարժումները, Սասնյ, Վանի, Պոլսի, Մուսա-Դաղի, Շարին-Կարահիսարի եւ այլն պայքարները, եւ կամ տեղօրիստական մենամարտները ցարիզմի դէմ: Այս ամենը, աւազ, արգելքի տակ է դրաւած, եւ Հայկինոն չունի իր «Զրահակիկինը» ու չի էլ կարող ունելու:

Ինչ վերաբերամ է ժաղաբացիական պատերազմի շրջանին, որ ինչպէս ասացինք, այնքան առատ նիւք է հայրայրել ոռուսական շարժանկարին (Զապայել եւայլն): Նաև այս կողմից դրաւութիւնը շատ աննպաստ է Հայկինյ:

Խամար: Ա. Խանջեանը ու նրա հետ միասին բոլշևիկ միւս դեկավարները պահանջում են նկարահանել Հայաստանի խորիրայնացման շրջանի «ենթասկան դրագմերը» մատնաշելով միաժամանակ, որ այդ ուղղութեամբ մինչեւ այժմ կստարածը գեղարևստական արժեկից զուրկ է: Այդ պահանջը միանգումայն անիրազրծելի է: Կեզծած պատմութիւնից չէ կարելի գեղարևստական ժապաւեն ստեղծել: Որոնս էլ հայ բոլշևիկները, սուտ խենի ծեւանալով, պնդեն, թէ «հարստասու ու ներռական է Հայաստանի բանաբռների ու աշխատաւոր գիւղացիների պայքարը գաշնակցական մղաւանշային տիրակալութեան դէմ» եւ «կարող է կատամայեղափոխական հրաշալի նկարների նիւք ծառայել», ոչնիչ չի գուրս զայ: Բոլորին եւ դրանց քըւում նաև Հայկինոյի գործիչներին ժաշ յայտնի է, որ «Հայաստանի բանաբռնը ու աշխատաւոր գիւղացիները» ոչ մէկ յեղափոխական պայքար չեն մըղել Հանրապետական Հայաստանի դէմ, իսկ նատ ու կենու կոմունիստների երեխայական ելայքները երեւանում եւ կամ մայիսի առ արկածախնդրութիւնը որ այնինքն անփառունակ վախճան ունեցաւ հայ բոլշևիկների համար, գեղարևստական ժապաւենի նիւք չի կայող համեստանալ: Գուցէ հայ բոլշևիկների գժրախտութիւնն է, բայց փաստ է - եւ այդ փաստը չընդունելը յիմարութիւն է - որ Հայաստանի խորիրայնացումը տեղի է ունեցել առանց բազական կուտների եւ առանց հայ բոլշևիկների մասնակցութեան: Դա մեծ անյարմարութիւն է, հայ կոմունիստների համար, որովհետեւ այս կէտում վերամուտ է գուգահեռը Ռուսաստանի հետ եւ խորում է ոուսներին կուրօրէն ու ծուլօրէն ընդորինակելու հեարաւորութիւնը, բայց ուրիշ նար չկայ: Ռուսաստանում կա'յ «Զապայել», բայց Հայաստանում չի

կարող լինել, եւ ի զուր են այդ ուղղութեամբ կատարուող խօսակցութիւնները: Մայիսեան (1920 թ.) եւ փետրուարեան (1921 թ.) դէպքերից ամենաշատը կարելի է «քյուել» «Երկու գիշեր»-ի նման «տաղտկալի», յուզականութիմից զուրկ եւ աններգործունակ» ժապաւէնների մէջ, բայց բնաւ երբեք

գեղարւեստական մի գործի:

Հայ շարժանկարի, ինչպէս եւ առհասարակ հայ մշակոյթի առաջ զարգացման ու վերելքի հնարաւորութիւններ կրացւեն միայն այն ժամանակ, երբ Հայաստանում ընդունեն այս նըշմարտութիւնը:

Ա. Խ.

### ՀԱԼԵՊԻ ԹԵՄԻ ՀԱՅԵՐԸ

Կիլիկիոյ Կարուղիկոսարանի պաշտօնարքը «Հասկ» ամսարերը ի վետրւ.-ի համարում հրատարակւած է հետևեալ հետաքրքրական վիճակացոյցը Հալեպի

կամ Բերիայի քեմի հայ բնակչութեան վերաբերմամբ, որ արտասովում ենք ամբողջութեամբ.-

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱԼԵՊԻ ԹԵՄԻ 1934

Վայրեր Ամուս-նութիւն	Ծնութիւն	Մահ	Հայ բնակչութիւն 1934-ին
Արու	Էգ	Արու	Էգ
Հալեպ 188	426 423	182 158	37160
Ճարապլուս 2	221 18	8 6	785
Արար-Փունար 8	27 22	3 3	872
Ազագ. 8	39 26	11 8	1415
Աֆրին 1	9 4	5 2	267
Պապ	— 1	2 —	69
Մէնապին 1	4 3	— 1	157
Ճիսր-Շուլը	— 1	— —	53
Նազուպիյէ 3	13 7	3 2	376
Թէլ-Ապեար 2	6 8	13 14	431
Այն-Արուս	— 2	1 2	193
Ռազգա	2 9	— 1	338
Հասիչէ 2	7 6	9 8	330
Բաս-իւլ-Այն 1	6 5	5 3	298
Այն-Տիվար 2	3 5	3 3	183
Տէրիկ 3	7 13	— 3	649
Գամիշլիէ 27	72 58	31 23	3900
Տէյր-Զօր 3	12 13	3 5	455
Մէյտան-Էֆպէլ -	1 1	1 —	113
Թինա	— 1	— —	57
Գումար 253	667 662	280 242	48,101

Այս վիճակագրութիւնը վերաբերում է միայն լուսաւորչական հայերին: Հալեպի քիւրի քայլամարտը բնդիամուր թիւը գիտ-

նալու համար պիտօք է աւելացնել եւ կարողիկ ու բողոքական հայերին: